

MEDI-CAL-ի ՀՈԳԵԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

(Medi-Cal Mental Health Entitlement)

Գիտե՞ք որ Կալիֆորնիայում կան հոգեբուժական ծառայություններ ստանալու իրավասություն: Դա ճիշտ է: Դա ճիշտ է եղել 1966-ի Medi-Cal ծրագրի սկսման օրվանից: Երեխաներ, չափահասներ եւ մեծահասակներ որոնք Medi-Cal են ստանում, անհրաժեշտ ծառայություններից օգտվելու իրավասություն ունեն: Դա պարտադրում է դաշնակցային եւ նահանգային օրենքը:

Medi-Cal-ի հոգեբուժական ծառայությունները մեծապես ընդարձակվել են երբ որդեգրվել են targeted case management-ը (բժշկական, ընկերային, դաստիարակչական, եւ այլ ծառայությունների ծրագիր որոնք նահանգներին իրավունք են տալիս մատուցել ծառայություններ հատուկ դասի պատկանող անհատներին կամ հատուկ վայրերում բնակող անհատներին) 1991 թվին եւ վերականգնումային հոգեբուժական ծառայությունները 1993 թվին: Այս ծառայությունները անհրաժեշտության դեպքում կարող են մատուցվել զանազան համայնքային տեղադրավայրերում եւ տանը: Յուրաքանչյուր շրջան պետք է մատուցի բոլոր հատուցված ծառայությունները ներառյալ հետեւյալները.

- Targeted Case Management (բնակավայր ձեռք բերելու օգնություն, օժանդակություն, աշխատանք)
- Հոգեբուժական Ծառայություններ (խորհրդատվություն, գնահատում, ծառայության ծրագրի մշակում)
- Վերականգնում (անհատական օգնություն ապաքինման նպատակներով)
- Հրատապ Հարցերի Միջամտում, Կայունացում, եւ Բնակարանային Ծառայություններ (ներառյալ տանը)
- Բնակարանային Տեղափոխման Ծրագրեր (մինչեւ 18 ամիս)
- Դեղորայքով Օժանդակվող Ծառայություններ (ներառյալ իրազեկ պահող համաձայնությունը եւ ծրագրի մշակումը)

- ‡ Եթե դուք սպառող եք, դուք իրավունք ունեք ծառայություններ ստանալ համաձայն ձեր նպատակներին: Բոլոր ծառայությունները պետք է ձեզ մատուցվեն համաձայն մշակված ծրագրի որը դուք պետք է ստորագրեք, եւ ստանաք դրա օրինակը:
- ‡ Եթե դուք ընտանիքի անդամ եք, ձեզ կքաջալերվի մասնակցելու ձեր սիրելիի հետ:
- ‡ Եթե դուք ծառայություն մատուցող եք, դուք կարող եք օժանդակել նպաստ ստացող անհատի ցանկացած ծառայությունները ստանալու համար:
- ‡ Եթե դուք դատապաշտպան եք, դուք կարող եք հաճախորդին օժանդակել բողոքագիր ներկայացնելու հարցում, ծառայությունից մերժվելու դեպքում:

Հեռաձայնեցեք Disability Rights California
800-776-5746 համարով
Հավելյալ տեղեկությունների համար



Դաշնակցային օրենքը պահանջում է որ բոլոր ծառայությունները մատուցվեն իրավացի փոփոխությամբ: Ծրագրի ֆոնդերի սահմանափակ լինելու պատճառով պատրաստված սպասողական ցուցակները ապօրինի են: